



USAID

FROM THE AMERICAN PEOPLE

MOBILIZING ACTION AGAINST CORRUPTION



ՓՈՐՔ ԻՎ ԽՈՐՀԻ ԲՈՅՆԵՐԸ
ՀՈՒՆՎԱԿՈՍ

**ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՀԱՐԿԱՅԻՆ
ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԸ
ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ**

ԵՔԵՍՆ 2009



ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ

Սույն տպագրությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով տրամադրվող օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատու է միմիայն Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը, և այն կարող է չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Չարկային վարչարարության հետ կապված տարածքային առանձնահատկությունները	8
Չարկային համակարգում կոռուպցիային նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները	20
Չարկային համակարգի բարեփոխումների արդյունավետության բարձրացմանն ուղղված գործարարների առաջարկությունները	41
Վերջաբան	45
Չավելված	47

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Երկրի տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի վրա իր ազդեցությունն ունեցող փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համար 2008 թվականը առանձնահատուկ էր:

«Փոքր և միջին ձեռնարկատիրության ազգային կենտրոն» հիմնադրամի տվյալներով 2008թ-ին փոքր և միջին ձեռնարկատիրության բաժնեմասը Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ կազմել է 41.7%՝ 2007թ. 41%-ի փոխարեն և գրեթե կրկնակի անգամ գերազանցել է 1999թ.-ի ցուցանիշը: Ոլորտի ներդրումը արտահանման ընդհանուր ծավալի մեջ 2008թ.-ին կազմել է 17% 2007թ.-ի՝ 16.9% և 2003թ.-ի՝ 14.3%-ի փոխարեն: Ոլորտը նկատելի ներդրում է ունեցել նաև նոր աշխատատեղերի ստեղծման գործում: 2008թ.-ին գրանցված 20 հազար նորաստեղծ ձեռնարկությունները բացել են մոտ 27.1 հազար նոր աշխատատեղ, որից 14 հազարը նարգերում և 13.1 հազարը Երևանում, ապահովելով աշխատատեղերի ընդհանուր թվի 42.1%-ը: ՓՄՁ ոլորտը հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսքով ապահովել է բյուջեի մուտքերի 28%-ը:

Ոլորտի զարգացմանն ուղղված պետության ջանքերը 2009թ.-ին կենտրոնացած էին ՓՄՁ-ի համար բարենպաստ մթնոլորտի ձևավորման, այսինքն վարչարարության պարզեցման և ժամանակակից մեխանիզմների ներդրման, գործընթացների թափանցիկության ապահովման, պետական և մասնավոր հատվածի կառուցողական համագործակցության վրա, ինչը հիմք է ստեղծում ոլորտի հետագա որակական զարգացման համար:

Սակայն, Հայաստանի ՓՄՁ ոլորտի զարգացման ընթացքը դեռևս հանդիպում է որոշակի խոչընդոտների, որոնք պայմանավորված են և՛ օբյեկտիվ և՛ սուբյեկտիվ գործոններով: Դրանցից են, մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսա-վարկային միջոցների անմատչելիությունը, գործարար տեղեկատվության և խորհրդատվության տրամադրման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները, ՓՄՁ սուբյեկտների արտադրանքի և մատուցվող ծառայությունների շուկաների առաջնղման հետ կապված խնդիրները, ինչպես նաև սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ գործարար հմտությունների պակասը, ժամանակակից տեխնոլոգիաների և տեղեկատվության անհասանելիությունը և արտաքին տնտեսական կապերի թուլությունը: Հարկ է նշել նաև, որ առկա հիմնախնդիրների դրսևորումները և սրությունը խիստ տարբերվում են կախված ՓՄՁ սուբյեկտների գործելու վայրից և այդ տարբերությունը հստակ նկատելի է հատկապես հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում:

ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող օրենսդրական բնույթի հիմնախնդիրները հանգում են հիմնականում ՓՄՁ սուբյեկտների և պետական մարմինների, մասնավորապես, հարկային մարմինների հետ փոխհարաբերություններում դեռևս առկա մի շարք վարչարարական բնույթի խնդիրներին՝ կապված տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական և հաշվապահական հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերի,

տնտեսավարող սուբյեկտներում անհարկի ստուգումների հաճախականության հետևանքով:

Պետական եկամուտների կոմիտեն այն կառույցներից է, որն ամեն օր շփվում է տնտեսավարող սուբյեկտների հետ, իսկ հարկային վարչարարությունը և համակարգի ծառայողների վարքագիծը դիտվում են որպես պետական քաղաքականություն:

Հանրային ծառայությունների հարկային հատվածում կոռուպցիոն վարքագծի դրսևորման համար շարժառիթները մեծ են ինչպես դրամաշորք պաշտոնյաների, այնպես էլ հարկերի վճարումից խուսափող հարկատուների համար: Հարկային համակարգի խրթին լինելը պարարտ հող է ստեղծում կոռուպցիայի զարգացման համար: Համակարգի օրենսդրական կարգավորման բարդ և երկիմաստ դրսևորումները պետական պաշտոնյաներին օրենքների և կանոնակարգերի կամայական մեկնաբանությունների հնարավորություն են ընձեռում՝ հակառակ կողմին պարտադրելով կոռուպցիոն փոխհարաբերությունների մեջ մտնել:

Հիրավի, հարկային համակարգի պարզեցման հետ մեկտեղ, հարկային վարչարարության մեջ կոռուպցիոն ռիսկերի կրճատումն ու հարկահավաքների արդար գործելակերպի խթանումը պետականուտների հավաքագրման գործընթացում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ առավել կարևոր և առաջնահերթ քայլերից են: «Երկրի պետական եկամուտների գերակշիռ մասը կազմում են և առաջիկա տարիներին կկազմեն հարկային եկամուտները: Զարգացման ներկա փուլում կառավարությունը կարևորում է ինչպես եկամուտների հավաքագրման մակարդակը, այնպես էլ դրանց ապահովմանն ուղղված վարչարարության ժամանակակից, անաչառ և հետևողական միջոցառումների իրականացումը», նշված է 2008թ.-ի մայիսին ՀՀ Կառավարության ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության յոթ հիմնական նպատակները ներկայացնող փաստաթղթում:

Համաձայն այդ փաստաթղթի հարկային մարմինները պետք է նվազագույն խնդիրներ ստեղծեն գործարար համայնքի համար՝ սահմանելով հաշվարկների, հաշվետվությունների և գրանցումների վարման պարզ և սպառիչ պահանջներ, իրականացնելով սահմանափակ և արդյունավետ ստուգումներ, պայքարելով անազնիվ աշխատողների դեմ և անհրաժեշտ թափանցիկություն ապահովելով հարկային համակարգի գործունեության մեջ: Հարկային մարմինների նման աշխատանքը պետք է փոխհատուցի այն դժվարությունները, որ հայաստանյան գործարարն ունի տարածաշրջանում, կապված համեմատաբար մեծ ծախսերի ու այլ խոչնդոտների հետ: Վերը թվարկած խնդիրների լուծման համար կպահանջվի հարկային վարչարարության արդյունավետ ռազմավարություն, հստակ նպատակներ ու դրանցից բխող միջոցառումների ծրագիր:

Փաստաթղթում հարկային համակարգի հիմնական առաքելությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Կայուն պետական եկամուտների ապահովում, «դեմքով դեպի հարկ վճարողը» սկզբունքի գերակայությամբ»: Հարկային վարչարարության ռազմավարությունը առաջիկա տարիներին հիմնված է լինելու ՀՀ կառավարության 2008-2012թթ.-ի գործունեության ծրագրի,

հարկաբյուջետային ոլորտը կարգավորող օրենքների, միջազգային և ՀՀ վերջին տարիների առաջավոր փորձի վրա:

Փաստաթուղթը սահմանում է նաև հարկային վարչարարության բարեփոխումների հիմնական ուղղությունները: Հարկային ծառայությունն իր առաքելության կենսագործման համար նախանշել է յոթ նպատակ, դրանց հասնելուն ուղղված ծրագիր և միջոցառումների ժամանակացույց: Իսկ ՀՀ կառավարությունը հարկային վարչարարության ռազմավարության հետևողական կիրառմանը հետամուտ լինելու նպատակով ստեղծել է ՀՀ վարչապետի ղեկավարությամբ գործող եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհուրդ (ԵՎԲԱԽ): Սպասվում է, որ արդյունքում նպատակային, իրատեսական և վերահսկելի բարեփոխումները հարկային համակարգը կդարձնեն վստահելի, պարզ և մրցունակ, կբարելավեն գործարար միջավայրը, կխթանեն տնտեսական աճը և, որպես հետևանք, կապահովեն հարկային եկամուտների աճը:

Վերը հիշատակված հարկային վարչարարության յոթ հիմնական նպատակներն են.

- ՆՊԱՏԱԿ I. Խոշոր բիզնեսի ճիշտ, լիարժեք և ժամանակին հարկման ապահովում,
- ՆՊԱՏԱԿ II. Փոքր ձեռներեցության նկատմամբ «փափուկ» հարկային վարչարարության կիրառում,
- ՆՊԱՏԱԿ III. Հարկային մարմնում կոռուպցիայի հաղթահարում,
- ՆՊԱՏԱԿ IV. Հարկային պարտավորությունների կամավոր վճարման (ինքնազմահատման) սկզբունքի ներդրում,
- ՆՊԱՏԱԿ V. Հարկային ստուգումների նոր քաղաքականություն,
- ՆՊԱՏԱԿ VI. Հարկային մարմնի կառավարման նոր սխեմա,
- ՆՊԱՏԱԿ VII. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում:

2008թ.-ի ապրիլի 11-ին երկրի վարչապետի որոշմամբ հաստատվեցին և մեկնարկեցին փոքր ձեռնարկատիրական գործունեության ոլորտում հարկային օրենսդրության և վարչարարության կատարելագործմանն ուղղված միջոցառումները: 2009թ.-ի սկզբից ուժի մեջ մտավ հարկային օրենսդրության բարեփոխումների փաթեթը, որի նպատակն է կարգավորել տնտեսությունում առկա հարկային օրենսդրական թերություններն ու բացթողումները: Վերջինիս համաձայն բոլոր ձեռնարկությունները պարզեցված հարկի դաշտից տեղափոխվեցին ընդհանուր հարկման դաշտ, իսկ այն իրավաբանական անձինք, որոնց գործարքների հարկվող շրջանառությունը նախորդ օրացուցային տարում չի գերազանցել 58.35 մլն. դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում հարկվող շրջանառության այդ շեմը գերազանցելու պահից: Մինչույն ժամանակ, Պետեկամուտների կոմիտեն հանդես եկավ կազմակերպություններում ստուգումների հաճախությունը կտրուկ կրճատելու նախաձեռնությամբ:

Գործարար հանրությունը ոգևորությամբ ընդունեց փոքր ձեռներեցության նկատմամբ «փափուկ» հարկային վարչարարության կիրառմանն ուղղված իշխանության նախաձեռնությունը և պատրաստակամություն դրսևորեց մասնակցել հարկային ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված քննարկումներին, հանդես գալ դիտողություններով և առաջարկներով:

Օրենսդրական և վարչարարական բարեփոխումների մեկնարկից կես տարի անց «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը» (ՓՄԲՀ) նախաձեռնեց ուսումնասիրություն՝ բացահայտելու համար գործարարների ընդհանուր տեսակետները ՓՄՁ ոլորտում ընթացող հարկային բարեփոխումների և հարկային համակարգում կոռուպցիոն դրսևորումների վրա դրանց ազդեցության վերաբերյալ: Ուսումնասիրության նպատակն էր պարզել, թե որո՞նք են հարկային համակարգին բնորոշ կոռուպցիայի պատճառները, ինչպե՞ս կարելի է կանխարգելել կոռուպցիան հարկային համակարգում:


Ստորև ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում ուսումնասիրության արդյունքների ամբողջական վերլուծությունը, վեր են հանվում ՓՄՁ հատվածի տեսանկյունից գործող հարկային համակարգում առկա, ոլորտի զարգացումը արգելակող և կոռուպցիայի դրսևորումներին նպաստող հանգուցային խնդիրները: Ներկայացվող նյութը թույլ է տալիս տեղեկանալ, թե ըստ գործարար հանրության, որո՞նք են հարկային համակարգում կոռուպցիային առավելագույնս նպաստող գործոնները, օրենսդրության մեջ կոռուպցիոն ռիսկերի ծագման աղբյուրները, գործարարներին ներկայացվող պահանջների հետ կապված դժվարություններն ու դրանց բնույթը: Նյութը անդրադառնում է նաև տարբեր պետական և ոչ պետական կառույցների կոռուպցիայի դեմ պայքարում ունեցած դերին, ինչպես նաև իրականացվող կամ իրականացվելիք միջոցառումների արդյունավետությանը:

Ներկայացվող նյութի շրջանակներում փորձ է արվել դիտարկել ՓՄՁ ոլորտի զարգացման նպատակով իրականացվող հարկային բարեփոխումների ընթացքն ու կոռուպցիայի երեկույթի հետ կապված խնդիրները մարզերում և երևանում գործող ՓՄՁ ներկայացուցիչների աչքերով և, որոշ խնդիրներին անդրադառնալիս՝ համադրել դրանք:

Հարկային վարչարարության հետ կապված տարածքային առանձնահատկությունները

Ուսումնասիրությունը իրականացվել է ընդհանուր թվով 186 փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ներկայացուցիչների և ոլորտային հասարակական կազմակերպությունների շրջանում, ընդ որում Լոռի, Տավուշ և Վայոց Ձոր մարզերում հարցմանը ներգրավվել են 100 մասնակից, իսկ Երևանում՝ 86:

Հարցման մասնակիցների կազմը ըստ մարզերի




Գծապատկեր 1

Հարցման մասնակիցներին առաջարկվել էր հարցաշար (տես՝ կից հավելվածը), որում ներառված էին երկրում ՓՄՁ ոլորտի համար ներկայումս գործող հարկման համակարգին, դրանում առկա բարդություններին և հակասություններին, վերջիններով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերին և այդ ռիսկերի վերացմանն ուղղված կիրառվող և առաջարկվող միջոցառումներին վերաբերող հարցեր:

Հարցման մասնակիցների կազմը ներառում է անհատ ձեռնարկատերերի, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, փոքր և միջին ոլորտի շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների:

«Այլ» կարգավիճակի մեջ մտնում են 3 արտադրական կոոպերատիվների, 3 փակ բաժնետիրական ընկերությունների, 13 ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և 2 գործարարությամբ զբաղվելու մտադրություն ունեցող քաղաքացիներ (գծապատկեր 2):

Հարցման մասնակիցների կազմը ըստ կարգավիճակի




Գծապատկեր 2

Գաղտնիք չէ, որ մարզերում փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեությունն ունի որոշակի առանձնահատկություններ: Մարզերում գործող ձեռնարկատերերը իրավական առումով ավելի խոցելի են, քան մայրաքաղաքում, ուր կան ձեռնարկատիրության, հատկապես՝ փոքր և միջին ձեռնարկատիրության շահերը պաշտպանելու կոչված բազմաթիվ հասարակական կառույցներ: Գաղտնիք չէ նաև, որ մայրաքաղաքից հեռու վայրերում ձեռնարկատիրական գործունեությունն ավելի սերտորեն է շաղկապված ոչ ֆորմալ «բարեկամա-դրացիական» կամ «ընկերական» հարաբերությունների հետ:

Արդյունքում գործարարները հաճախ խուսափում են բացահայտ արտահայտել իրենց դժգոհությունը պետական մարմիններից: Ուստի, մայրաքաղաքից հեռու վայրերի գործարարների շրջանում ոչ պետական կազմակերպությունների ուժերով իրականացվող անաչառ, անանուն հարցախույզները կարող են օգտակար լինել ՓՄՁ հարկման ոլորտում գործերի իրական վիճակի մասին պատկերացում ստանալու առումով:

Այսպես, մարզերի և Երևանի ՓՄՁ ներկայացուցիչները համակարծիք են երկրում կոռուպցիայի խնդրի կարևորության հարցում: Մարզերից և Երևանից հարցման միայն երկուական մասնակից են գտնում, որ կոռուպցիան երկրում «խնդիր չէ», իսկ խնդիրը չափազանց լուրջ են համարում մարզերում՝ 56%-ը, Երևանում՝ 65%-ը (գծապատկեր 3):


Կոռուպցիան երկրում



Գծապատկեր 3.

Կոռուպցիայի դեմ պայքարում իշխանության գործադրած ջանքերի գնահատականները խիստ տարբերվում են մարզերում և Երևանում: Եթե մարզերում հարցման մասնակիցների միայն 14%-ն են գտնում, որ կոռուպցիայի դեմ պայքարում իշխանությունը բավական քաղաքական կամք չի դրսևորում, ապա Երևանում գնահատականը շատ ավելի խիստ է: Այդ կարծիքին են հարցման մասնակիցների շուրջ 51.2%-ը (գծապատկեր 4):


Կոռուպցիայի դեմ պայքարում իշխանության կամքը



Գծապատկեր 4.

Մարզերում և Երևանում տարբեր են նաև գործող հարկային համակարգին տրվող գնահատականները: Եթե մարզերում այն բարենպաստ են համարում 10%-ը, ապա Երևանում նման գնահատական են տվել հարցման մասնակիցների ընդամենը 2.3%-ը: Իսկ «Ծայրահեղ անբարենպաստ» գնահատականի հետ համամիտ են մարզերից հարցման մասնակիցների 46%-ը, Երևանից՝ 36%-ը (գծապատկեր 5):


Գործող հարկային համակարգը



Գծապատկեր 5.

Գործարարների հետ անձնական շփումները հիմք են տալիս ենթադրել, որ նման գնահատականը պայմանավորված է նրանով, որ գործող հարկային համակարգը հաշվի չի առնում փոքր և միջին ձեռնարկատիրության համար մարզերում առկա պայմանների առանձնահատկությունները, այսինքն հարկային քաղաքականության մեջ բացակայում է տարածքային դիվերսիֆիկացիան:

**Կոռուպցիան հարկային համակարգում
երկու տարի առաջ զրանցված մակարդակի համեմատ**




Գծապատկեր 6.

Մարզերում գործող հարցման մասնակիցները համակարծիք չեն հարկային համակարգում կոռուպցիայի ներկա և երկու տարի առաջ գրանցված մակարդակների համեմատության հարցում: Ձայները գրեթե հավասարաչափ բաշխվել են երկու հակադիր գնահատականների միջև՝ 38%-ի կարծիքով այն նվազել է, իսկ 40%-ի կարծիքով՝ աճել: Երևանում հարցման մասնակից գործարարների գրեթե կեսի (48.8%) կարծիքով իրավիճակը չի փոխվել (զճապատկեր 6):

Մարզերի և Երևանի գործարարները դեռևս չեն արձանագրում հարկային մարմիններում կոռուպցիոն ռիսկերի էական նվազում, սակայն այդ ուղղությամբ պետության ջանքերը «որոշ չափով արդյունավետ» կամ «բավականին արդյունավետ» են գտնում՝ մարզերում գրեթե 75%-ը, Երևանում՝ 65%-ից ավելին (զճապատկեր 7):

Հարկային մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարի պետության ջանքերը




Գճապատկեր 7.

Այսպիսով, հարցման արդյունքները թույլ են տալիս արձանագրել, որ պետության ջանքերը տվել են որոշակի արդյունքներ: Հարկային համակարգում կոռուպցիայի մակարդակը, 2007թ.-ին գրանցված տվյալների հետ համեմատած, գոնե չի աճել: Այս փաստը, իրապես, կարելի է դրական համարել:

Ստացված արդյունքները վկայում են ընթացող բարեփոխումների նկատմամբ գործարարների վստահության քվեի մասին: Այն արդարացնելը տնտեսական քաղաքականության մեջ հետագա հաջողությունների գրավականն է:

Գաղտնիք չէ, որ ներկայումս տնտեսությունում կատարվող ապրանքաշրջանառության մեջ մեծ մաս են կազմում առանց հաշվարկային փաստաթղթերի գործարքները և տնտեսության բնականոն զարգացման համար փաստաթղթաշրջանառության կարգավորումը մնում է օրակարգի ամենակարևոր և, միևնույն ժամանակ, ամենաբարդ խնդիրը: Որպես լուծում, սույն թվականի սկզբից, առաջարկվել էր առանց երկկողմանի հաշվարկային փաստաթղթերի կատարված գործարքների դեպքում հասանելիք տուգանքից ազատվելու համար հարկային մարմիններին տեղեկություններ ներկայացնել փաստաթուղթ չտրամադրող տնտեսավարող սուբյեկտի մասին: Չնայած, մասնավոր հանդիպումների ժամանակ գործարքները հիմնավորող փաստաթուղթ չտրամադրելու մասին անընդհատ հնչող բողոքներին, հարցման մասնակիցները հայտնել են ընդամենը 20 նման դեպքի մասին, որոնցից ստուգմամբ հաստատվել են 13-ը (զծապատկեր 8):

Հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելը




Գծապատկեր 8.

Ուսումնասիրության ընթացքում արձանագրված դեպքերի թիվը չափազանց փոքր է, որպեսզի փաստաթղթաշրջանառության կարգավորմանն ուղղված նման մեխանիզմի արդյունավետության մասին որոշակի կարծիք կազմվի: Մնում է արձանագրել, որ այն ինչ-ինչ պատճառով տարածում չի գտել, ուստի և արդյունավետ չէ:

Ընթացիկ տարվա նորանուծություններից է նաև հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) պարտադիր և համատարած կիրառման պահանջը, որը ժամանակին, հատկապես տոնավաճառներում, բուռն դիմադրության արժանացավ: Գործարարներից շատ-շատերը այդ որոշումը գնահատեցին որպես ձեռնարկատիրական գործունեության ազատության դեմ ոտնձգություն, շուկայի տոտալիտար կարգավորման և կոմերցիոն գաղտնիքի բռնի բացահայտման փորձ: Այժմ կրքերը փոքր ինչ հանդարտվել են և, ի պատիվ ձեռնարկատերերի, նրանցից շատերի կողմից հաշվիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը ընկալվում է որպես դեպի քաղաքակիրթ շուկա ուղղված քայլ: Այդ է վկայում հարցման մասնակիցների շրջանում կառավարության այս քայլին հավանություն տվողների անսպասելի բարձր տոկոսը՝ 62%-ից ավելի մարզերում և 75.6%-ից ավելի Երևանում (զծապատկեր 9): Գուցե և ստացված արդյունքի վրա որոշակի ազդեցություն է ունեցել II-III եռամսյակներում գործող ՀԴՄ կտրոնների դիմաց բոնուսների վճարման համակարգը:


ՀԴՄ-ների համատարած կիրառումը



Գծապատկեր 9.

Առկա կոռուպցիոն ռիսկերի բացահայտման առումով ուշադրության է արժանի նաև այն, որ ՀԴՄ-ների կիրառման նպատակահարմարության դեմ արտահայտվողներից յուրաքանչյուր երրորդը մարզերում (ավելի քան 27%-ը), և երկուսից մեկը Երևանում (ավելի քան 55%-ը), գտնում են, որ ՀԴՄ-ների համատարած կիրառումը լրացուցիչ կոռուպցիոն ռիսկ է առաջացնում (զծապատկեր 10):


ՀԴՄ-ների կիրառման նպատակահարմարությունը



Գծապատկեր 10.

Հարկային վարչարարության ռազմավարության կարևորագույն նպատակներից է հարկային համակարգում կոռուպցիայի հաղթահարումը: Այդ ուղղությամբ Պետեկամուտների կոմիտեն, ձեռնարկատերերի և հարկային գործակալների միջև անմիջական շփման անհրաժեշտությունը նվազեցնելու համար, որոշակի քայլեր է նախաձեռնել: Նման շփումները, որպես կանոն, տեղի են ունենում ստուգումների կամ հարկային հաշվետվությունների ներկայացման ժամանակ:

2009թ. սկզբից ստուգումների արդյունքները




Գծապատկեր 11.

Մարզերում վերջերս հարկային մարմինների կողմից ստուգման են ենթարկվել հարցման մասնակիցներից 30-ը (գրեթե յուրաքանչյուր երրորդը), իսկ Երևանում՝ 43-ը (յուրաքանչյուր երկրորդը): Մարզերում ստուգման դեպքերից 20-ի (70%), իսկ Երևանում՝ 10-ի (23%) արդյունքում «խնդիրներ» են առաջացել (զծապատկեր 11):

Մարզերում հարցման մասնակիցներից 10-ը (10%), իսկ Երևանում՝ 15-ը (մոտ 19%) խոստովանել են հարկային մարմինների հետ կոռուպցիոն փոխհարաբերությունների անձնական «փորձ» ունենալու մասին (զծապատկեր 12):

Կոռուպցիոն փոխհարաբերությունների անձնական փորձը




Գծապատկեր 12.

Եթե այս տվյալները պայմանականորեն համադրենք վերջերս հարկային մարմինների ստուգումների արդյունքում առաջացած խնդիրների թվի հետ, ապա կստացվի, որ մարզերում յուրաքանչյուր երկրորդ, իսկ Երևանում՝ յուրաքանչյուր ստուգում կոռուպցիոն դեպքի է հանգեցրել:

Չարկ է արձանագրել, որ հարցման արդյունքներից ելնելով, կոռուպցիոն փոխհարաբերությունների արատավոր «փորձը» ամենևին էլ չի կրում համատարած և համընդհանուր բնույթ: Սակայն, իրականում չի կարելի բացառել նաև կոռուպցիոն փաստերի ավելի մեծ տոկոսի հավանականությունը, եթե հաշվի առնենք արատավոր փորձառությունը թաքցնելու գործարարների բնական ցանկությունը:

Ինչ վերաբերվում է հաշվետվությունները հանձնելու ժամանակ հարկային գործակալների հետ «անձնական շփումներին», ապա մարզերում հարցման մասնակիցների ընդամենը 24%-ն է օգտվում հաշվետվությունները հեռակա կարգով հանձնելու հնարավորությունից: Քանակը ինքնին մեծ չէ, սակայն առաջընթացն ակնհայտ է: Հիշենք, որ ոչ վաղ անցյալում նման պրակտիկան մարզերում իսպառ բացակայում էր: Իսկ Երևանում հաշվետվությունները հեռակա կարգով հանձնելու հնարավորությունից արդեն օգտվում են հարցման մասնակիցների շուրջ 58.1% -ը (գծապատկեր 13):


Հեռակա կարգով հաշվետվությունների ներկայացման հնարավորությունից օգտվելը



Գծապատկեր 13.

Այս հնարավորությունից չօգտվողները մեծամասամբ իրենք են նախընտրում հաշվետվությունները հարկային գործակալին առձեռն հանձնելը: Նման գործելակերպի բացատրությունների թվում են՝ տարրական սովորույթը, հարկային գործակալի հետ անձնական բարիդրացիական կամ ընկերական հարաբերությունների վերահաստատումը, հաշվետվություններում հնարավոր սխալներից ապահովագրվելու և, որը երբեք չի կարելի բացառել, «որոշ հարցեր» տեղում լուծելու ձեռնարկատիրոջ ցանկությունը (գծապատկեր 14):

Հեռակա կարգով հաշվետվությունների ներկայացման
հնարավորությունից չօգտվելու պատճառները




Գծապատկեր 14.

**Հարկային համակարգում կոռուպցիային նպաստող
օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները**

Հարկային համակարգում ներկայիս իրավիճակի գնահատականները ստանալուց առաջ փորձ է արվել գնահատել հարկային վարչարարության ոլորտում ընթացող բարեփոխումների մասին գործարարների տեղեկացվածության աստիճանը: Արդյունքը բավականին հուսադրող է: Մարզերում «որոշ չափով տեղյակ են» կամ «քաջատեղյակ են» պատասխանները տվել են հարցման մասնակիցների 98%-ը, երևանում՝ շուրջ 91% -ը (գծապատկեր 15):

Ընթացող բարեփոխումների մասին տեղեկացվածության աստիճանը




Գծապատկեր 15.

Արձանագրենք, որ երկրի գործարարները լավ են տեղեկացված, ինչը վկայում է համապատասխան պետական և հասարակական կառույցների գործարարների իրազեկման ուղղությամբ մեծ և արդյունավետ աշխատանքի մասին:


Հետաքրքիր էր տեսնել նաև հարցման մասնակիցների բաշխվածությունն ըստ գործող հարկման դաշտերի (գծապատկեր 16) և հարկման դաշտի այս կամ այն ընտրության պատճառը (գծապատկեր 17):

**Հարցման մասնակիցների կազմը ըստ հարկման
ռեժիմների**



Գծապատկեր 16.


Հարկման դաշտի ընտրությունը



Գծապատկեր 17.

Ուսումնասիրության խնդիրներից էր նաև ՓՄՁ-ների համար գործող նախկին և ներկա հարկման կարգերին բնորոշ կոռուպցիոն ռիսկերի գնահատականների համեմատությունը: Այդ նպատակով նախ պարզել ենք, որ պարզեցված հարկով աշխատանքի փորձ են ունեցել հարցման մասնակիցների գերակշռող մեծամասնությունը՝ 59.1% (գծապատկեր 18):


Նախկինում պարզեցված դաշտում աշխատանքի փորձ ունեցողները



Գծապատկեր 18.

Ընտրության հնարավորության դեպքում, հարցման մասնակիցների 66.7%-ը կնախընտրեին աշխատել պարզեցված հարկի դաշտում (գծապատկեր 19);

Նախընտրելի հարկման կարգը




Գծապատկեր 19.

Առաջ անցնելով ասեմք, որ գրեթե բոլոր քննարկումների ժամանակ գործարարները կարծիք են հայտնել, որ գերադասելի են համարում ոչ թե շահույթի, այլ շրջանառության հարկումը:

ՓՄՁ-ների համար նախկինում և ներկայիս գործող հարկման կարգերին բնորոշ կոռուպցիոն ռիսկերի համեմատությունը, ըստ հարցման մասնակիցների, տվել է հետևյալ հակասական պատկերը (գծապատկեր 20).

Հարկման կարգերին բնորոշ կոռուպցիոն ռիսկերի գնահատականը



Գծապատկեր 20.

Նախ նշենք, որ կոռուպցիոն ռիսկերի գնահատականը տալուց ձեռնպահ են մնացել հարցման մասնակիցների զգալի մասը. այսպես՝ 34.9%-ը ԱԱՀ վճարող չհամարվողների համար գործող կարգի և 30.6%-ը պարզեցված հարկման կարգի դեպքում: Կոռուպցիոն «որոշակի ռիսկ» և «բարձր ռիսկ» տեսնողների թիվը գրեթե նույնն է երկու կարգերի համար՝ 39.7% պարզեցված կարգի և 38.7% ԱԱՀ չվճարողների համար գործող կարգի դեպքում: Սակայն, «ցածր ռիսկ» գնահատականը պարզեցված կարգի դեպքում տվել են մասնակիցների 30.6%-ը, իսկ ԱԱՀ չվճարողների համար գործող կարգի դեպքում՝ 25.3%-ը:

Ստացված արդյունքը մեկ անգամ ևս վկայում է գործարարների կողմից պարզեցված հարկի կարգը նախընտրելի գտնելու մասին: Բացառված չէ նաև, որ դա կապված է տարեսկզբից գործող հարկման կարգում դեռևս առկա անորոշությունների հետ:


Հնարավորինս հստակեցնելու համար հարկային համակարգում կոռուպցիային նպաստող գործոնները, հարցման մասնակիցներին առաջարկվել էր գնահատել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը:

Ուսումնասիրության ընթացքում փորձ է արվել գնահատել օբյեկտիվ բնույթի հետևյալ գործոնների ազդեցությունը օրենսդրության անկատարությունն ու հակասականությունը, օրենքների դժվար ընկալելի լինելը, տեղեկատվության պակասը, վարչարարական ճնշումը, համակարգի անկատարությունը, հարկային մարմիններում ծառայողների պատասխանաբարության և հաշվետվողականության մշակույթի և ավանդույթի բացակայությունն ու ցածր աշխատավարձը, թափանցիկ ընթացակարգերի բացակայությունը, անկախ և արդյունավետ բողոքարկման ընթացակարգի բացակայությունը, անկախ և ոլորտին քաջատեղյակ լրատվամիջոցների բացակայությունը, քաղաքացիական հասարակության թույլ ինստիտուցիոնալ կարողությունները:

Սուբյեկտիվ գործոններից դիտարկվել են օրենքը շրջանցելու ավանդական ձգտումը, գիտելիքների պակասը և կոռուպցիայի արատավոր պրակտիկային դիմակայելու հասարակական կամքի բացակայությունը:

Հարկային համակարգում կոռուպցիային նպաստող օբյեկտիվ գործոններից առավել մեծ թվով ձայն են ստացել անկախ և արդյունավետ բողոքարկման ընթացակարգի բացակայությունը՝ 51%-ից ավելի, հարկային համակարգում ծառայողների ցածր աշխատավարձը՝ գրեթե 49% և թափանցիկ ընթացակարգերի բացակայությունը՝ ավելի քան 48% (գծապատկեր 21):

Կոռուպցիային նպաստող օբյեկտիվ գործոնների դերը, (%)




Գծապատկեր 21.

Ստացված արդյունքները մեկ անգամ ևս փաստում են հարկային վարչարարության քաղաքականության շրջանակներում նախատեսված, հարկային համակարգում կոռուպցիայի հաղթահարմանն ուղղված միջոցառումների հրատապ իրականացման անհրաժեշտությունը:

Հարկային համակարգում կոռուպցիային նպաստող սուբյեկտիվ գործոնների շարքում առաջատար դիրքերում են կոռուպցիային դիմակայելու հասարակական կամքի բացակայությունը և օրենքը շրջանցելու ավանդույթը, ինչի մասին վկայում են հարցման մասնակիցների գրեթե կեսի գնահատականները (գծապատկեր 22):


Կոռուպցիային նպաստող սուբյեկտիվ գործոնների դերը, (%)



Գծապատկեր 22.

Ստացված արդյունքը ահագանգում է մեզանում լայն տարածում գտած և երկրի զարգացումը լրջորեն վտանգող ավանդույթի տարածված լինելու մասին և ստիպում լուրջ և հրատապ միջոցներ ձեռնարկել այդ խիստ մտահոգիչ աղտից ազատվելու համար

Գործող օրենքների կոռուպցիոն ռիսկի գնահատականը, (%)



Գծապատկեր 23.

Կոռուպցիային ուղղակի կերպով նպաստող «օրենսդրության անկատարություն ու հակասականություն», «դժվար ընկալելի օրենքներ», «տեղեկատվության պակաս», «վարչարարական ճնշումներ» օբյեկտիվ գործոններին հարցման մասնակիցների տված բավականին մեծ հավաքական գնահատականը դիտարկելով և համադրելով երրորդ տեղում հայտնված «գիտելիքների պակաս» սուբյեկտիվ գործոնի հետ, կստանանք հարկային համակարգում կոռուպցիայի դրսևորման համար պարարտ հող ստեղծող հիմնախնդիրների թնջուկը, որի հանգուցալուծմանը պետք է առաջին հերթին ուղղված լինեն պատկան մարմինների ջանքերը:

Հարցման մասնակիցներին առաջարկվել էր կոռուպցիոն ռիսկի տեսանկյունից գնահատել ներկայումս գործող հարկային ոլորտին առնչվող օրենքները: Արդյունքում առավել մեծ կոռուպցիոն ռիսկ առաջացնող է ճանաչվել տիրահոշակ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքը (29.50%), որին զգալի չափով զիջում են մնացած բոլոր օրենքները (զծապատկեր 23):

Արդյունքը սպասելի էր, եթե հիշենք, որ հենց ստուգումների դեպքում է առաջանում գործարարի և հարկային գործակալի միջև անմիջական շփման անխուսափելի անհրաժեշտությունը: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով, Պետական եկամուտների կոմիտեն մտադիր է ներդնել ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգ: Հուսով ենք, որ համակարգի ներդրումը շատ չի ուշանա, իսկ ռիսկային չափանիշները կլինեն բաց, հարկ վճարողների ընտրությունը՝ թափանցիկ:


Հաջորդ քայլով պետք էր որոշել օրենսդրության անկատարության հետևանքով առաջացած կոռուպցիոն ռիսկի աղբյուրները: Դիտարկվել են երկու ցուցանիշ՝ երկիմաստություն և դրույթաչափ:

Բերենք գործարարների կողմից մատնանշվող հարկային օրենսդրության մեջ տեղ գտած երկիմաստության մի քանի օրինակ: «Եկամտահարկի մասին» օրենքը չի հստակեցնում. արդյո՞ք գործատու չհանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ համար պարտադիր է «... ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված եկամտահարկի եռամսյակային հաշվարկ» ներկայացնելու պահանջը: Նշենք, որ հարկային մարմինների ներկայացուցիչներից ոմանք հաշվարկը ներկայացնելու պահանջը գտնում են պարտադիր, իսկ ոմանք՝ ոչ:

Օրենքի երկիմաստության մի այլ օրինակ են բերում հաստատագրված վճարով աշխատող անհատ ձեռնարկատերերը: Օրենքը չի հստակեցնում, սոցիալական ապահովության վճարի հաշվարկի ժամանակ արդյո՞ք կարելի է հաստատագրված վճարը ծախս համարել:

Հարցման մասնակիցների մոտ 30%-ը երկիմաստության պատճառով առավել մեծ կոռուպցիոն ռիսկ առաջացնող են ճանաչել «Շահութահարկի մասին» օրենքը: Անձնական շփումների ժամանակ գործարարները այս արդյունքը բացատրում են օրենքում նվազեցվող ծախսերի ճանաչման հետ կապված անորոշությամբ: «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» կոռուպցիայի առումով առավել ռիսկային օրենքի երկիմաստությունը մեծ է համարել հարցման մասնակիցների մոտ 20%-ը (գծապատկեր 24): Այս օրենքի հետ կապված մեծ կոռուպցիոն ռիսկը գործարարները բացատրում են «ապրանքային մնացորդների» հաշվառման վիճահարույց խնդրի անորոշությամբ:


Գործող օրենքների երկիմաստության գնահատականը



Գծապատկեր 24.

Դժվար չէր կանխատեսել, որ առավել մեծ կոռուպցիոն ռիսկի աղբյուր կճանաչվի «Ավելացված արժեքի հարկի» դրույքաչափը: Այն ավելի քան 10%-ով առաջ անցնելով շահութահարկի, եկամտահարկի, պարտադիր սոցիալական ապահովության և հաստատագրված վճարներից, ստացել է հարցման մասնակիցների ձայների մոտ 30%-ը (գծապատկեր 25): Կասկած չկա, որ գործարքների փաստաթղթավորման հիմնախնդրի և ԱԱՀ-ի առումով երկու հարկային ռեժիմների առկայության պարագայում հարկի հաշվանցման խնդիրը գործարարների համար բավականին մեծ լարվածություն է, հետևաբար, կոռուպցիոն ռիսկ է առաջացնում: Գործարարների կարծիքով ներկայիս պայմաններում ԱԱՀ ընդունելի դրույքաչափը կարող է կազմել 10-15%:

Գործող օրենքների դրույքաչափի գնահատականը




Գծապատկեր 25.

Հարցման արդյունքները վկայում են, որ գործող հարկային օրենսդրությունը լուրջ վերլուծության, վերանայման և կատարելագործման կարիք ունի: Կարծում ենք, որ ստացված արդյունքները օգտակար կլինեն պատկան մարմիններին և հաշվի կառնվեն «Հարկային օրենսգիրքը» ամբողջականացնելիս:

Հարցման մասնակիցներին առաջարկվել էր գնահատել հարկային հաշվարկների, հաշվետվությունների, տեղեկությունների լրացման դժվարության աստիճանը: Հարկային հաշվարկներից առավել մեծ դժվարություններ են հարուցում շահութահարկի՝ 19% և ավելացված արժեքի հարկի՝ 16% հաշվարկները (գծապատկեր 26):


Հարկային հաշվարկերի լրացման դժվարության աստիճանը



Գծապատկեր 26.

Հարկային հաշվետվություններից դժվարություններ են առաջացնում հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների՝ մոտ 21%, և ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվությունները՝ 17% (գծապատկեր 27):


Հարկային հաշվետվություններ



Գծապատկեր 27.

Հայտարարությունների, տեղեկանքների, տեղեկությունների շարքում գործարարների մոտ ամենամեծ դժվարությունները կապված են շահութահարկի տարեկան հայտարարագրի լրացման հետ (գծապատկեր 28): Բանն այն է, որ տարին մոտենում է ավարտին, սակայն դրա բովանդակությունն ու ձևը դեռևս հայտնի չեն:


Հայտարարություններ, տեղեկանքներ, տեղեկություններ



Գծապատկեր 28.

Գործարարների հետ մասնավոր զրույցներից ելնելով այս փաստաթղթերի լրացման դժվարությունները հիմնականում կապված են դրանց ներկայացման պարբերականության և պահանջվող տեղեկատվության ծավալի հետ (զժապատկեր 29):

Հարկային փաստաթղթերի լրացման դժվարությունների բնույթը



Գժապատկեր 29.


Հուսով ենք, որ ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները ավելորդ չեն լինի Պետեկամուտների կոմիտեի կոմից հայտարարված փոքր ձեռներեցության նկատմամբ «փափուկ» հարկային վարչարարության սկզբունքները մշակելիս, որոնց համաձայն « ... նվազագույնի կհասցվեն ու կպակասեցվեն հաշվետվություններն ու գրանցումները ... »:

Ա.թ. հոկտեմբերին «AmCham» ամսագրին տված հարցազրույցում ֆինանսների փոխնախարար Սուրեն Կարայանը տեղեկացրել է, որ առաջիկայում նախատեսվում է ներդնել Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) մշակած և մեկ ամիս առաջ հրապարակած փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական հաշվետվողականության ստանդարտը, իսկ գերփոքր ձեռնարկությունների համար մշակվելու է հարկային հաշվառման հատուկ կանոնակարգ:

Անշուշտ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում հարցման մասնակիցների պատկերացումը պետական ու ոչ պետական կառույցների և իշխանությամբ օժտված անձանց կողուպցիայի դեմ պայքարում ունեցած դերի մասին: Հարցի պատասխանը ստանալու նպատակով հարցման մասնակիցներին առաջարկվել էր գնահատել համապատասխան կառույցների և անձանց դերը:

Պետական կառույցների շարքում ներկայացված էին Երկրի Նախագահը, Ազգային ժողովը, Աժ պատգամավորները, Վերահսկիչ պալատը, Կառավարությունը, Իրավապահ մարմինները, Գլխավոր դատախազը և Մարդու իրավունքների պաշտպանը: Ստացված արդյունքները հաստատում են այն ենթադրությունը, որ պետական կառույցների շարքում կոռուպցիայի դեմ պայքարում հանրությունը առավել մեծ դերակատարություն է վերագրում Ազգային ժողովին՝ մոտ 48%, Կառավարությանը՝ մոտ 47%, ապա Երկրի Նախագահին՝ 46% (զճապատկեր 30):

Պետական կառույցների դեռ կոռուպցիայի դեմ պայքարում




Չճապատկեր 30.

Ոչ պետական կառույցների շարքում առաջարկվել էր գնահատել հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների, զանգվածային լրատվամիջոցների, գործարար միավորումների և միջազգային կազմակերպությունների դերակատարության աստիճանը կոռուպցիայի դեմ պայքարում: Բնականաբար, ստացված արդյունքները հաստատում են այն կարծիքը, որ կոռուպցիայի դեմ պայքարում ոչ պետական կառույցները իրենց ունեցած դերի առումով զիջում են պաշտոնական լծակներ ունեցող մարմիններին և անձանց: Սակայն, ստացված գնահատականները վկայում են, որ թվարկած կառույցներից հանրությունը առավել մեծ սպասելիքներ ունի հասարակական կազմակերպություններից՝ 28%: Ընդ որում, հասարակական կազմակերպությունների դերն ու պատասխանատվությունը, ըստ հարցման մասնակիցների, համադրելի է Մարդու իրավունքների պաշտպանի դերի ու պատասխանատվության հետ՝ 30% (գծապատկեր 31):

Արձանագրված արդյունքը հասարակական կազմակերպությունների համար ոգևորող, և միևնույն ժամանակ, պարտավորեցնող է:


Ոչ պետական կառույցների դերը կոռուպցիայի դեմ պայքարում



Գծապատկեր 31.

Չարցման մասնակիցներին առաջարկվել էր գնահատել կոռուպցիայի դեմ պայքարում հանրային իրազեկման, արդար կառավարման և օրենքի գերակայության շրջանակներում իրականացվող կամ իրականացվելիք միջոցառումների արդյունավետությունը: Ստացված արդյունքները վկայում են, որ հանրային իրազեկման ապահովման գործում ամենից կարևորն են համարվել ուսուցումը և տեղեկատվության ազատությունը ապահովող օրենսդրության կատարելագործումը (գծապատկեր 32):

Չանրային իրազեկում




Գծապատկեր 32.

Չարցման մասնակիցները գտնում են, որ արդար կառավարման խնդրի լուծման համար անհրաժեշտ է առաջին հերթին ապահովել ընթացակարգերի

թափանցիկությունը՝ մոտ 42%, քաղաքացիական հասարակության հզորացումը՝ 38% և ֆինանսական կառավարման վերահսկումն ու հաշվետվողականության համակարգի կատարելագործումը՝ մոտ 37% (զճապատկեր 33):

Արդար կառավարում



Գճապատկեր 33.


Հարցման մասնակիցների ավելի քան 40%-ի կարծիքով օրենքի գերակայության ապահովման համար անհրաժեշտ է նշակել և ներդնել

արդյունավետ բողոքարկման մեխանիզմներ: Հարցման մասնակիցների 36%-ը գտնում են, որ կոռուպացված բարձրաստիճան պաշտոնյաների դատական կարգով հետապնդման հնարավորությունը ապահովելու նպատակով գործող օրենսդրության վերանայման անհրաժեշտություն կա (գծապատկեր 34):

Հիշեցնենք, որ նման առաջարկներ են հնչում նաև հանրության այլ խմբերի, հասարակական և մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից:

Մեկ անգամ ևս հույս ենք հայտնում, որ ուսումնասիրության արդյունքները օգտակար կլինեն երկրում կոռուպցիայի մակարդակի նվազեցման անհրաժեշտությամբ մտահոգ պետական և հասարակական կառույցների համար:

Օրենքի գերակայություն



Գծապատկեր 34

Հարկային համակարգի բարեփոխումների արդյունավետության բարձրացմանն ուղղված գործարարների առաջարկությունները

Կասկած չկա, որ սույն ուսումնասիրությունը ի գորու չէ պատասխանել ոլորտում առկա բազմաթիվ և բազմաբնույթ հիմնահարցերին և խնդիրներին, սակայն ստացված գնահատականները կարող են ուղեցույց ծառայել հստակ, ընկալելի, ներդաշնակ և գործարար հանրության հետ համաձայնեցված հարկային համակարգի ձևավորման ճանապարհին:

Գործարար հանրության համոզմամբ երկրում գործող հարկային համակարգը պետք է համահունչ լինի պետեկամուտների ձևավորման ռազմավարությանը, իսկ այդ առումով առավել նպաստավոր կարող է լինել հարկման լայն բազա և չափավոր դրույքաչափ ունեցող հարկային համակարգը: Ինչ վերաբերում է հարկային վարչարարությանը, ապա այն պետք է նպատակաուղղված լինի սոսկ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկերի վճարման ապահովմանը, չպետք է ստանձնի պատժիչ գործառույթ և կենտրոնանա դրա վրա:

Ստորև կանդրադառնանք հարցման ընթացքում, ինչպես նաև տարբեր ձևաչափի քննարկումներում գործարար հանրության կողմից հնչեցրած դիտողություններին և առաջարկություններին, որոնք ուղղված են հարկային համակարգի բարեփոխումները հնարավորինս արդյունավետ դարձնելու նպատակին: Առաջարկությունները վերաբերում են գործող հարկային համակարգի այն խնդիրներին, որոնք ՓՄՁ հատվածի տեսանկյունից արգելակում են ոլորտի զարգացումը և նպաստում կոռուպցիայի դրսևորումներին: Հարկ է նշել, որ առաջարկությունների որոշ մասը կամ արդեն ներառված է բարեփոխումների գործընթացի մեջ, կամ գտնվում է մոտ ապագայում իրականացվելիք միջոցառումների շարքում: Ուստի, նպատակահարմար է գործարարների առաջարկությունները ներկայացնել՝ դրանք համադրելով բարեփոխումների շրջանակում իրականացվող կամ իրականացվելիք միջոցառումների հետ:

Գործարարների առաջարկությունները ըստ բնույթի դասակարգվել են որպես հայեցակարգային, օրենսդրական և վարչարարական:

Հայեցակարգային բնույթի առաջարկությունները թույլ են տալիս պատկերացում կազմել, թե ինչպիսի՞ն է տեսնում գործարարը հարկային ծառայության հռչակած «դեմքով դեպի հարկ վճարողը» սկզբունքը գործողության մեջ:

ՓՄՁ ներկայացուցիչներից շատերի կարծիքով ներկայումս գործող հարկային համակարգը չի խրախուսում նրանց ընդլայնելու իրենց տնտեսական գործունեությունը և հզորանալու, քանի որ այն կբերի ընդհանուր հարկային ռեժիմի դաշտում հայտնվելու պարագային, որն անցանկալի է, հաշվի առնելով ընդհանուր ռեժիմով հարկման ընթացակարգերի բարդությունն ու դժվարությունը: Ուստի և, անհրաժեշտ է մտածել միասնական, պարզ և տնտեսավարող սուբյեկտների զարգացմանն և հզորացմանը նպաստող հարկային համակարգի ձևավորման մասին: Իսկ հարկային ռեժիմի տարածքային դիվերսիֆիկացիան կնպաստի համայնքների տնտեսական զարգացմանը:

Քարենպաստ գործարար միջավայրի ձևավորումն ապահովելու նպատակով հարկային համակարգը պետք է աշխատի «սկզբից տալ, հետո միայն պահանջել» սկզբունքի համաձայն: Այդ ուղղությամբ առաջարկվող քայլերն են. թեթևացնել հարկային բեռը, բացառել կոռուպցիան, խթանել ենթակառուցվածքների խիստ նպատակային զարգացումը, հետո միայն խստացնել հարկերից խուսափելու համար պատժամիջոցները:

Այստեղ տեղին է արձանագրել, որ փոքր և միջին ձեռնարկությունների համար 2009թ.-ին բացվել և գործում է «Չաշվապահական ծառայությունների կենտրոն», որի հիմնական նպատակն է ՓՄՁ սուբյեկտներին հաշվապահական հաշվառման, հարկային հաշվետվությունների պատրաստման, աուդիտի և ներքին վերահսկողության, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումն ու հաշվապահական հաշվառումը ինքնուրույն վարելու ուղղությամբ ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչների հմտությունների զարգացումը: Կենտրոնի ծառայությունների արժեքի 50-80%-ը վճարվում է պետական բյուջեից:

Գործարարները գտնում են, որ անհրաժեշտ է ապահովել ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի բացարձակ թափանցիկությունը, ներդրումների նկատմամբ շահագրգիռ հոգածությունը, արտահանման հստակ և գործնական խթանումը, գիտատար և նորարարական ճյուղերի զարգացմանն ուղղված գործնական պետական աջակցությունը:

Իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը ապահովելու համար շատ կարևոր է հարկատուների հարկային կարգապահության և հարկահավաքման գործընթացի օբյեկտիվ վերահսկման և գնահատման մեջ ներգրավել ոլորտային հասարակական կառույցները:

Ուսումնասիրության ընթացքում կազմակերպված քննարկումների ժամանակ բազմիցս խոսվել է ներկայիս ֆինանսա-տնտեսական ճգնաժամի պայմաններում տեսչական ստուգումների ժամանակավոր կասեցման անհրաժեշտության մասին: Այժմ կարելի է գոհունակությամբ արձանագրել, որ տեսչական ստուգումների մասով կառավարությունը աննախադեպ քայլի է դիմել: 2009թ.-ի հունիսի 1-ից մինչև 2011թ.-ի հունվարի 1-ը տեսչական ստուգումների չեն ենթարկվի այն տնտեսավարող սուբյեկտները, որոնց շրջանառությունը 2008թ.-ին չի գերազանցել 70 մլն դրամը: Որոշումը չի տարածվում միայն Պետեկամուտների կոմիտեի ստուգումների և որոշ բացառիկ դեպքերի վրա:

Գործարարներն ունեն նաև բազմաթիվ **օրենսդրական բնույթի առաջարկություններ**, օրինակ՝ կրճատել հարկատեսակների ցանկը: Այս առումով տեղին է նշել, որ արդեն մշակվել և շրջանառության մեջ են դրվել «Անշարժ գույքի հարկի մասին», «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» և «Եկամտային հարկի մասին» օրինագծերը, որոնք նախատեսում են հողի և անշարժ գույքի հարկերի փոխարեն մեկ միասնական հարկ, իսկ եկամտահարկի և սոցիալական ապահովության հարկերի փոխարեն՝ մեկ եկամտային հարկատեսակ: Եվս մեկ անգամ կցանկանայինք նշել, որ հարկային համակարգի պարզեցման առումով գործարարների կարծիքով նպատակահարմար է հարկել ոչ թե շահույթը, այլ շրջանառությունը:

Առաջարկվում է ընդլայնել հաստատագրված վճարով հարկման ենթակա գործունեության տեսակների և արտոնագրային վճարով հարկվող ծառայությունների ցանկը, ընդ որում սեզոնային բնույթի գործունեության տեսակների մասով՝ հրաժարվել հաստատագրված վճարից կամ հաստատագրված վճարի գործակիցը դարձնել սեզոնային: Բավականին շատ են հյուրանոցային տնտեսության ոլորտի գործունեությունը հաստատագրված վճարով հարկելու դեմ արտահայտվող գործարարները: Մարզերում գործող ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների վկայությամբ հուլիսից գործող հարկման նոր կարգի համաձայն իրենց հարկային պարտավորությունները կտրուկ (երկուսից-երկուս ու կես անգամ) աճել են:

Տնտեսության առողջացման, առևտրային կազմակերպությունների միջև արդար մրցակցային դաշտի ձևավորման նպատակով հարկ է հեշտացնել ձեռնարկությունների լուծարման գործընթացը, որոշակի ժամկետով սահմանել թույլատրելի շահույթի նորմ, մշակել և ներդնել պետության կողմից գների և մենաշնորհային գործունեության խիստ կանոնակարգման մեխանիզմ, կիրառել գույքահարկի և շահութահարկի աճողական սանդղակ, իսկ գործատուի պարտադիր սոցիալական վճարի դրույքաչափը որոշելիս սահմանել աշխատողների թվաքանակից կախված նվազող սանդղակ:

Հասարակության լայն շերտերը տնտեսական գործունեության մեջ ներգրավելու նպատակով կարևոր է հրատապ կարգով ներդնել ձեռնարկությունների գրանցման «մեկ պատուհանի» սկզբունքը, հնարավորինս կրճատել օրենսդրության փոփոխությունների հաճախականությունը, օրենսդրորեն ապահովել գործատուի շահերի պաշտպանվածությունը և կրճատել հաշվետվություններում պահանջվող տեղեկատվության ծավալը:

Հարկային ոլորտում ընթացող կամ սպասվելիք բարեփոխումներն անշուշտ ողջունելի են, սակայն, գործարարի համար շատ կարևոր է ժամանակին իմանալ գալիք փոփոխությունների մասին, մասնակցել դրանց մշակման գործընթացին, հնարավորություն ունենալ դրանք հաշվի առնել՝ պլանավորելու համար հետագա ֆինանսատնտեսական գործունեությունը: Ձեռնարկատերերի կարծիքով հարկային ոլորտում օրենսդրական փոփոխությունները պետք է շրջանառության մեջ դրվեն ոչ թե տարեվերջին, ինչպես դա հաճախ արվում է, այլ 3-ից 6 ամիս առաջ:

Գործարարների ուշադրությանն են արժանացել նաև **վարչարարական բնույթի խնդիրները**: Դրանց լուծման եղանակների շարքում ներկայացված են նաև հարկային համակարգի ներկայացուցիչների դիտողություններն ու առաջարկությունները:

Նշվում է, օրինակ, որ տարեսկզբից փոքր ձեռնարկությունների համար գործող «փափուկ» հարկային ռեժիմում մինչ հիմա հստակեցված չէ տարվա արդյունքների վերաբերյալ հաշվետվության բովանդակությունն ու ձևը: Նյութը պատրաստելու ընթացքում տեղեկացանք, որ արդեն պատրաստ է «Շահութահարկի պարզեցված հաշվարկ» ձևը:

Հարկատուին պատահական սխալներից ապահովագրելու նպատակով առաջարկվում է՝ ներդնել սուբսիդիար պատասխանատվությամբ օժտված միջնորդ հարկային գործակալի և ոլորտին կցված հարկային տեսուչի ինստիտուտներ, որոնց աշխատանքը կգնահատվի ձեռնարկության կամ ոլորտի զարգացման մասին վկայող տվյալներից ելնելով: Նման ինստիտուտների առկայության դեպքում խիստ կնվազի ոչ կանխամտածված անճշտությունների թիվը: Արդյունքում հեշտությամբ կառանձնացվեն «ռիսկային չափանիշների» հիման վրա ստուգման ենթակա առևտրային կազմակերպությունները:

Գործարարները գտնում են, որ շատ օգտակար կլինի հարկային վարչարարությանը վերաբերող օպերատիվ տեղեկատվության տրամադրման համակարգի ներդրումը և առավել հաճախ հանդիպող սխալների և խախտումների մասին տեղեկատվության հրապարակումը:

Գործարարները նպատակահարմար և կարևոր են գտնում նաև հարկային համակարգում կադրերի մասնագիտական կարողությունների զարգացման համակարգի ներդրումը: Այստեղ ավելորդ չի լինի հիշատակել գործարարների կողմից հաճախ հնչող բողոքն այն մասին, որ հարկային մարմինների ներկայացուցիչների կեցվածքն ու վարքագիծը կրում են անհարկի կանխակալ մեղադրական կամ սպառնացող բնույթ: Հարկ է, որ յուրաքանչյուր հարկային պաշտոնյա հստակ գիտակցի, որ ինքը սոսկ ծառայություն մատուցող է և իր ծառայության դիմաց գործարարների վճարած հարկերից է գոյանում պետծառայողի վարձատրության գումարը: Հարկային գործակալի վարքագծի կանոնների ներդրումը և դրանց նկատմամբ խիստ վերահսկողությունը կարող են հիմք դառնալ իրավիճակի նկատելի բարելավման համար:

Գործարարներից շատերին մտահոգում է գերավճարների և ապրանքային մնացորդների հաշվառման խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը: Գերավճարների մասով Կառավարությունը որոշում է կայացրել 2009թ.-ի երկրորդ եռամսյակում իրականացնել ավելացված արժեքի հարկի գերավճարների շուրջ 15 մլրդ. դրամի վերադարձը: Գործարարները հուսով են, որ գերավճարների վերադարձի գործընթացը շարունակական բնույթ կկրի:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկայիս մակարդակի պայմաններում ընկերությունները ստիպված են ձեռքով լրացնել վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների հաշվառման և առաքման գրքերը: Ստուգող մարմինների համար դրանք ոչ միայն «սուրբ» գրքեր են, այլ նաև կողմնակի եկամուտի աղբյուր: Կարելի է հուսալ, որ Պետեկամուտների կոմիտեի կողմից ներկայումս ներդրվող հարկային հաշվետվողականության էլեկտրոնային կառավարման համակարգի կիրառման շնորհիվ նշված գրքերը մեկընդմիջտ դուրս կգան շրջանառությունից կամ գոնե լուրջ փոփոխությունների կենթարկվեն: Էլեկտրոնային կառավարման համակարգը հնարավորություն կստեղծի ամբողջությամբ ավտոմատացնել հարկային մարմինների կողմից իրականացվող գործառնությունների գերակշիռ մասը, կապահովի հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետությունը, հնարավորություն կստեղծի հարկ վճարողներին մատուցել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված բարձրորակ ծառայություններ:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Ամեն հայի երազանքն է Հայաստանը տեսնել հզոր, հարուստ ու մրցունակ պետություն՝ կայուն զարգացող տնտեսությամբ, ամենագրավիչ երկրներից մեկը աշխարհում ինչպես գործարարությամբ զբաղվելու, այնպես էլ ապրելու և աշխատելու համար, ուր հավասար պաշտպանվում են և՛ գործարարների, և՛ աշխատողների, և՛ սպառողների իրավունքներն ու շահերը: Այդ նպատակով Հայաստանում յուրաքանչյուր քաղաքացու համար կենսապայմանների բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է՝

- ստեղծել արդյունավետ, թափանցիկ, բաց քննարկումների և բանավեճերի միջոցով հասարակություն և մասնավոր հատվածի միջև հետադարձ կապը ապահովող կառավարման համակարգ,
- ձևավորել տնտեսության կայուն և համաչափ զարգացման, արտադրողականության աճի համար բարենպաստ մրցակցային միջավայր,
- ստեղծել գործարար և ներդրումային բարենպաստ մթնոլորտ,
- աջակցել հաջողված և պաշտպանված գործարարությանը,
- ապահովել պետություն-մասնավոր հատված կառուցողական համագործակցություն՝ սոցիալական գործընկերության կատարյալ համակարգ ձևավորելու միջոցով,
- երկրի մրցունակության բարձրացմանը զուգընթաց ապահովել Հայաստանի ինտեգրումը համաշխարհային տնտեսության մեջ,
- տնտեսության գերակա ոլորտների զարգացման միջոցով մշակել և իրականացնել երկրի արդյունաբերական նկարագրի ձևավորմանն ու ամրապնդմանն ուղղված դիվերսիֆիկացված արդյունաբերական քաղաքականություն,
- նպաստել դեպի ռեսուրսախնայող և գիտատար տնտեսություն փոխակերպմանը:

2009թ. նոյեմբերին ՀՀ կառավարությունը հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին իր ամփոփ հաշվետվության վերջաբանում հաստատում է, որ «...հավատարիմ կմնա իր որդեգրած ազատական տնտեսական քաղաքականության սկզբունքներին և ԱՀԿ և այլ միջազգային կառույցների առջև իր ստանձնած պարտավորություններին: Տնտեսական ճգնաժամի արդյունքում առաջացած քաղաքականության որոշակի ճշգրտման անհրաժեշտությունը ոչ մի դեպքում չի հանդիսանա ազատական քաղաքականության ուղուց շեղվելու պատճառ»:

Ցավալի կլիմի, եթե ինչ-ինչ մղումներից կամ պատճառներից ելնելով Կառավարությունը հետևողական չգտնվի իր իսկ կողմից նախաձեռնած տնտեսական և, մասնավորապես, ՓՄՁ հարկային բարեփոխումների իրականացման քաղաքականության հարցում և հուսախաբ անելով ՓՄՁ հանրությանը, խափանի դեռևս սաղմնային վիճակում գտնվող պետական-մասնավոր հատվածների համագործակցության ծիլերը, լուրջ հարված հասցնելով ընթացող տնտեսական բարեփոխումների հանդեպ գործարար հանրության շրջանում վստահության մթնոլորտի ձևավորմանը: Այս ճանապարհին հասարակության բոլոր հատվածները կառուցողական ներդրում ունենալու խնդիր ունեն:

Ավարտելով, մեկ անգամ ևս հույս ենք հայտնում, որ ուսումնասիրության արդյունքները ուշադրության կարժանանան ոչ միայն գործարար հանրության, այլ նաև բարեփոխումները նախաձեռնած և դրանց ընթացքի համար պատասխանատու կառույցների կողմից:

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

1. Կոռուպցիան մեր երկրում .

1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	3 <input type="checkbox"/>
<i>Խնդիր չէ</i>	<i>Խնդիր է</i>	<i>Չափազանց լուրջ խնդիր է</i>

2. Կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարելու ցանկություն և քաղաքական կամք

1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	3 <input type="checkbox"/>
<i>Չի դրսևորում</i>	<i>Դրսևորում է</i>	<i>Հստակ դրսևորում է</i>

3. Ինչպե՞ս կզմահատեք երկրում գործող հարկային համակարգը

1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	3 <input type="checkbox"/>
<i>Քարենպաստ</i>	<i>Բավարար</i>	<i>Անբարենպաստ</i>

4. Տեղա՞կ եք հարկային համակարգում իրականացվող բարեփոխումների մասին

1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	3 <input type="checkbox"/>
<i>Տեղյակ չեն</i>	<i>Որոշ չափով տեղյակ են</i>	<i>Քաջատեղյակ են</i>

5. Հարկային համակարգում կոռուպցիան այսօր երկու տարի առաջ եղածի հետ համեմատած.

1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	3 <input type="checkbox"/>
<i>Նվազել է</i>	<i>Չի փոխվել</i>	<i>Աճել է</i>

6. Հարկային համակարգում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելուն ուղղված պետության ջանքերը

1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	3 <input type="checkbox"/>
<i>Արդյունավետ չեն</i>	<i>Որոշ չափով են արդյունավետ</i>	<i>Բավականին արդյունավետ են</i>

7. Ինչպիսի՞ն է Ձեր կարգավիճակը:

1. Անհատ ձեռնարկատեր
2. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
3. Հաստատագրված վճարով աշխատող , անցեք 10-րդ հարցին
4. Այլ

8. Ավելացված արժեքի հարկ վճարող համարվո՞ւմ եք:

1. Այո
2. Ոչ

9. Եթե այո, ապա ինչու՞

- 1. Նախընտրելի է
- 2. Այլընտրանք չունեն

10. Նպատակահարմար գտնու՞մ եք հսկիչ-դրամարկղային մեքենաների համատարած կիրառումը:

- 1. Այո
- 2. Ոչ

11. Եթե ոչ, ապա ինչու՞

Ծանրաբեռնում է սպասարկման կազմակերպումը	<input type="checkbox"/>
Լրացուցիչ ծախսի և պատասխանատվության աղբյուր է	<input type="checkbox"/>
Լրացուցիչ հարկային պարտավորություններ է առաջացնում	<input type="checkbox"/>
Իրական հարկման բազան ֆիքսելու վտանգ է առաջացնում	<input type="checkbox"/>
Լրացուցիչ կոռուպցիոն ռիսկ է առաջացնում	<input type="checkbox"/>

12. Նախկինում պարզեցված հարկի դաշտում աշխատե՞լ եք:

- 1. Այո
- 2. Ոչ

13. Ընտրության հնարավորության դեպքում հարկման կարգերից ո՞րը կնախընտրեիք՝ նախկինում գործող պարզեցված, թե ներկայումս ԱԱՀ վճարող չհամարվողների համար գործող հարկման կարգը:

- 1. Պարզեցված հարկման կարգ
- 2. ԱԱՀ վճարող չհամարվողների հարկման կարգ

14. Գնահատեք նախկինում գործող պարզեցված հարկով և ներկայումս ԱԱՀ վճարող չհամարվողների համար գործող հարկման կարգերը ըստ կոռուպցիոն ռիսկի աստիճանի՝ տալով 1 գնահատականը նվազագույն ռիսկի և 3 գնահատականը՝ մեծ ռիսկի դեպքում:

Հարկման կարգ	<i>Կոռուպցիոն ռիսկի աստիճանը</i> <i>1 = ցածր ռիսկ, 3 = բարձր ռիսկ</i>		
Պարզեցված հարկ	1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	3 <input type="checkbox"/>
ԱԱՀ վճարող չհամարվող	1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	3 <input type="checkbox"/>

15. Օգտվում եք արդյոք հարկային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները հարկային տեսչություն ոչ առձեռն հանձնելու հնարավորությունից:

- 1. Այո
- 2. Ոչ

16. Եթե ոչ, ապա ինչու՞

- 1. Նախընտրում եմ անձնական շփումը
- 2. Չի խրախուսվում հարկային տեսուչի կողմից

17. Երբևէ դուրս գրե՞լ կամ ստացե՞լ եք :

1. Կրճատ հաշիվ-ապրանքագիր՝

- Այո
- Ոչ

2. Միակողմանի հաշիվ-ապրանքագիր՝

- Այո
- Ոչ

18. Տեղյա՞կ եք արդյոք առանց երկկողմանի հաշվարկային փաստաթղթերի կատարված գործարքների վերաբերյալ հարկային մարմիններին տեղեկություններ ներկայացնելու դեպք(երի)ի մասին:

- 1. Այո
- 2. Ոչ

19. Եթե այո, ապա ինչպիսի՞ն է եղել հետևանքը:

- 1. Ստուգմամբ հաստատվել է
- 2. Չի հաստատվել

20. Ունե՞ք արդյոք հարկային ոլորտում կոռուպցիոն փոխհարաբերությունների անձնական փորձ:

- 1. Այո
- 2. Ոչ

21. Գնահատեք ստորև բերված գործոնների դերը հարկային ոլորտում կոռուպցիայի դրսևորման մեջ՝ տալով 1 գնահատականը նվազագույն դերի և 5 գնահատականը առավել մեծ դերի դեպքում

Կոռուպցիային նպաստող գործոններ	Կոռուպցիային նպաստող գործոնները 1 = նվազ կարևոր 3 = շատ կարևոր
Օրենսդրության անկատարություն, հակասականություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Օրենքների դժվար ընկալելի լինելը	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Օրենքը շրջանցելու ավանդույթ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Տեղեկատվության պակաս	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Գիտելիքների պակաս	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Վարչարարական ճնշում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Համակարգի անկատարություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ծառայողների հաշվետվողականության մշակույթի և ավանդույթի բացակայություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Կոռուպցիային դիմակայելու քաղաքական և հասարակական կամքի բացակայություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ծառայողների ցածր աշխատավարձ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Թափանցիկ ընթացակարգերի բացակայություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Անկախ և արդյունավետ բողոքարկման ընթացակարգի բացակայություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Անկախ և արդյունավետ ՁԼՄ-ների բացակայություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Քաղաքացիական հասարակության թույլ ինստիտուցիոնալ կարողություններ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Այլ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>

22. Գնահատեք ներկայումս գործող օրենքները ըստ կոռուպցիոն ռիսկի աստիճանի՝ տալով 1 գնահատականը նվազագույն ռիսկի և 3 գնահատականը՝ առավել մեծ ռիսկի դեպքում նշելով ռիսկի տեսակը համապատասխան սունյակում X նշանով:

ՀՀ օրենքը	Կոռուպցիոն ռիսկ 1 = նվազագույն 3 = մեծ	Երկիմաստություն	Դրույթաչափ
Հարկերի մասին	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Ավելացված արժեքի հարկի մասին	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Շահութահարկի մասին	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Եկամտահարկի մասին	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Հաշվապահական հաշվառման մասին	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Հաստատագրված վճարների մասին	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

23. 2009 թ. հունվարի 1-ից առ այսօր հարկային մարմնի կողմից ստուգման ենթարկվե՞լ եք:

- 1. Այո
- 2. Ոչ

24. Եթե այո, խնդիրներ ունեցե՞լ եք:

- 1. Այո
- 2. Ոչ

25. Նշեք հարկային հաշվետվությունների, տեղեկությունների և հարկային հաշիվների լրացման դժվարության աստիճանը՝ տալով 1 գնահատականը նվազագույն դժվարության և 3 գնահատականը՝ առավել մեծ դժվարության դեպքում :

Փաստաթղթի տեսակը	Դժվարության աստիճանը
Շահութահարկի հաշվարկ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Շահութահարկի տարեկան հայտարարագիր	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված եկամտահարկի հաշվարկ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին տեղեկանք	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ֆիզիկական անձանց տարեկան եկամուտների մասին հաշվարկ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Վարձու աշխատողների, նրանց վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների մասին տեղեկություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Գործատուների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին հաշվետվություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի, տարեկան եկամուտների մասին հայտարարագիր	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին տեղեկություններ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ավելացված արժեքի հարկի հաշվարկ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Հարկ վճարող անձի կողմից հաշվետու ժամանակաշրջանում դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանք	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>

Հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Հաստատագրված վճարների հաշվարկման ցուցանիշների սահմանային չափերի վերաբերյալ հայտարարություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Հարկային հաշիվ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>

26. Գնահատեք հարկային հաշվետվությունների, տեղեկությունների և հարկային հաշիվների լրացման հետ կապված դժվարությունների բնույթը՝ տալով 1 գնահատականը նվազագույն և 3 գնահատականը՝ առավել մեծ դժվարության դեպքում:

Դժվարությունների բնույթը	աստիճանը՝
Լրացման բարդություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Շարադրման լեզու	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ձևավորում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Կիրառման անհարմարավետություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ներկայացման պարբերականություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Պարունակվող տեղեկատվության ծավալ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Տվյալների կրկնություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>

27. Գնահատեք ստորև բերված կառույցների դերը կոռուպցիայի դեմ պայքարում՝ տալով 1 գնահատականը նվազագույն դերակատարության և 3 գնահատականը՝ առավել մեծ դերակատարության դեպքում:

Երկրի նախագահ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ազգային ժողով	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Աժ պատգամավորներ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Կառավարություն	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Իրավապահ մարմիններ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Հասարակական կազմակերպություններ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Քաղաքական կուսակցություններ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
ԶԼՄ-ներ (մամուլ, TV, ռադիո)	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Բիզնես միավորումներ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Հետազոտական կառույցներ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Գլխավոր դատախազ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Վերահսկիչ պալատ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Մարդու իրավունքների պաշտպան	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Միջազգային կազմակերպություններ, միջազգային ֆինանսական կառույցներ, տեխնիկական օժանդակության ծրագրեր	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Այլ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>

28. Գնահատեք կոռուպցիայի դեմ պայքարի ստորև բերված ռազմավարությունները ըստ արդյունավետության աստիճանի՝ տալով 1 գնահատականը նվազագույն արդյունավետության և 3 գնահատականը առավել մեծ արդյունավետության դեպքում:

Չանրության իրազեկում	
Ուսուցում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Անկախ դիտարկում և տեղեկատվության տարածում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Կոռուպցիայի գնի և ազնիվ վարքագծի օրինակների վերաբերյալ	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Դիագնոստիկ ուսումնասիրություններ, դրանց արդյունքների հրապարակում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Չասարակության կողմից վերահսկման արդյունքների հրապարակում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Էթիկայի կանոնների ներդրում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ազնիվ վարքագծի արմատավորման համաձայնագրի կնքում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Լրագրողական հետաքննության խթանում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Տեղեկատվության ազատությունը ապահովող օրենսդրության կատարելագործում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Բիզնեսի, ՉԿ-ների և իշխանության հակա-կոռուպցիոն կոալիցիայի հզորացում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային գործիքների կիրառման խթանում:	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Կանխարգելում («Արդար կառավարում»)	
Վարչարարական ընթացակարգերի պարզեցում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Քաղաքացու իրավունքների հզորացում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Պետպաշտոնյաների սեփականության և եկամուտների վերահսկում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ֆինանսական կառավարման վերահսկման և հաշվետվողականության համակարգի բարեփոխում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Ընթացակարգերի թափանցիկության ապահովում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Բոլոր նակարդակների բյուջեների ձևավորման և կատարման ընթացակարգերի թափանցիկության ապահովում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Անկախ վերահսկման ինստիտուտների հզորացում (Վերահսկիչ պալատ, այլ)	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Քաղաքական և ֆիսկալ ապակենտրոնացում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Բիզնես հանրության դերի հզորացում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Քաղաքացիական հասարակության հզորացում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>

Կիրարկում («Օրենքի գերակայություն»)	
Վարչարար կառույցների ազնիվ գործելակերպի և հաշվետվողականության խթանում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Օրենսդրական բարեփոխումների խթանում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Դատական համակարգի բարեփոխում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Արդյունավետ բողոքարկման մեխանիզմների և ընթացակարգերի ներդրում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
«Թեժ գծերի» կազմակերպում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Չանրային շահերի պաշտպանության գրասենյակների հիմնում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>
Բարձրաստիճան պաշտոնյաների դատական կարգով հետապնդման հնարավորությունն ապահովելու նպատակով օրենսդրության վերանայում	1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/>

Լրացուցիչ դիտարկումներ՝